ԽԱՉԸ ԿԱՄ ԱԳԱԳԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. 1 ԹԱԳ. 15

1 *Եւ Սամուէլն ասեց Սաւուղին. Տէրն ինձ ուղարկեց քեզ իր Իսրայէլ ժողովրդի վրա թագաւոր օծելու, եւ հիմա Տիրոջ խօսքերի ձայնը լսիր: **2** Զօրաց Տէրն այսպէս է ասում. Ես հիշում եմ ինչ որ Ամաղէկն արեց Իսրայէլին, որ նորա ճանապարհը կտրեց երբոր նա դուրս էր եկել Եգիպտոսիցը: **3** Հիմա գնա՛ և ջարդի՛ր Ամաղեկին ու ոչնչացրո՛ւ նրա ամբողջ ունեցվածքը. չխնայես նրանց, կոտորի՛ր բոլորին՝ տղամարդ և կին, երեխա և կաթնակեր, արջառ և ոչխար, ուղտ և էշ:*

7 *Եվ Սաւուղը ջարդեց Ամաղեկի որդիներին Եվիլայից մինչև Եգիպտոսի դիմացի Սուրը: **8** Եվ ողջ բռնեց Ամաղեկի թագավորին՝ Ագագին, և ամբողջ ժողովրդին սրի բերան քաշելով՝ բնաջնջեց: **9** Բայց Սաւուղը և ժողովուրդը խնայեցին Ագագին և ոչխարների ու արջառների լավերին ու գերերին ու գառներին և այն ամենը, ինչ ընտիր էր, չուզեցին ոչնչացնել, այլ ոչնչացրին բոլոր անարժեք ու անպիտան անասունները:*

Ովքեր էին Ամաղեկացիները?

Ամաղեկը Եսավի թոռն էր

*Այսինքն՝ Ամաղեկացիները Աբրահամի ազգական սերունդ էին, **բայց ոչ ուխտի մեջ գտնվող ժողովուրդ**:*

*Նրանք ներկայացնում են այն, ինչ ծնվում է **մարմնից**, ոչ թե խոստումից:*

> *Գաղ. 4.29 - Բայց ինչպէս որ այն ժամանակ մարմնի կողմանէ ծնուածը հալածում էր նորան՝ ով հոգու կողմից էր, այնպէս էլ հիմա:*

Ամաղեկ = մարմինը, որը մշտապես հակադրվում է Հոգուն

- ***Ամաղեկացիների առաջին հարձակումը***

  *Հիշի՛ր, թե ինչ արեց քեզ Ամաղեկը ճանապարհին, երբ դուք դուրս էիք եկել Եգիպտոսից, որ ճանապարհին ելավ քո դեմ և **առանց Աստծուց վախենալու՝***

կոտորեց քո ետևից գնացող բոլոր տկարներին, երբ դու հոգնած ու սպառված էիր (Բ Օրինաց 25.17-18):

Հարձակումը՝

- *Թիկունքից, թույլերի վրա, հոգնածների վրա*

  *Ճիշտ ինչպես **մարմինը**, որը հարձակվում է հոգևոր թուլության պահին*

Ամաղեկացիների սովորություններն ու բնույթը

Ամաղեկացիները հայտնի էին որպես՝

- *Ագրեսիվ և անողորմ*
- *Աստծուց չվախեցող*
- *Մշտապես կրկնվող վտանգ*

Աստծո դատավճիռը Ամաղեկի դեմ

«Ես պիտի ջնջեմ Ամաղեկի հիշատակը երկնքի տակից» Ելից 17.14

Աստված պատվիրեց՝ ամբողջական կործանում

Ոչ պայմանական, ոչ ընտրովի

«Մարմնավոր միտքը Աստծո դեմ թշնամություն է:» Հռոմեացիս 8.7

ՉՍՊԱՆՎԱԾ ԱԳԱԳԸ՝ ԴԱՐՁԱՎ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՎՏԱՆԳ:

*Այն, ինչ Սավուղը չկործանեց իր ժամանակում, վերադարձավ **սերունդներ անց**՝ ավելի մեծ սպառնալիքով:*

Ամաղեկի հարվածը Դավթի թիկունքից (Ա Թագ. 30.1–20)

- *Դավիթը հաղթեց Ամաղեկացիներին*

- *Վերադարձրեց գերիներին*

- *Ավարտեց այն, ինչ Սավուղը չավարտեց*

«Աստվածաշնչում ավելի ուշ հայտնվում է Ագագացի Համանը, որը փորձեց կործանել Իսրայելին» (Եսթեր 3.1):

Այս բաներից հետո Ասուերոս թագավորը մեծարեց ագագացի Համանին և բարձրացրեց նրան և նրա աթոռն իր հետ եղող բոլոր իշխաններից վեր դրեց:

Եսթերի երեքօրյա ծոմի միջոցով Ագագի խավարը բացահայտվեց և դատապարտվեց:

- ***Համանը կախվեց ծառից*** *(Եսթեր 7.10)*

  Եւ Համանին կախեցին այն փայտի վրա, որ նա պատրաստել էր Մուրթքէի համար. Եւ թագավորի բարկութիւնն իջավ:

ՓՐԿՎԱԾ ԱԳԱԳԸ՝ ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ագագը խորհրդանշում է մարդու մարմինը (հին մարդը, մարմնական բնույթը)

- *Սավուղը չսպանեց Ագագին → ինչպես հավատացյալը, որ* ***չի խաչում մարմինը ամբողջությամբ***

  Գաղ. 5.24 - Բայց նորանք որ Քրիստոսինն են, իրանց մարմինը խաչ հանեցին կիրքերովը եւ ցանկութիւններով միասին:

  Հռ. 6.6 - Իմացե՛ք, որ մեր հին մարդը նրա հետ խաչվեց, որպեսզի մեղքի մարմինը կործանվի, որ այլևս մեղքին չծառայենք:

  Ագագը (մարմինը) խորհրդանշում է՝

- *Հին սովորություններ, Մարմնի ցանկություններ*

ԿԻՍՈՎ ՉԱՓ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԵՂԾՈՒՄ Է ԱՊԱԳԱ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ:

Այն, ինչ այսօր հանդուրժում ես, վաղը քեզ կիշխի

Չես կարող նոր շրջան մտնել՝ հին թագավորներով

> *1 Թագ. 15.23 - Որովհետեւ ապստամբությունը կախարդության մեղքի պես է, և անհնազանդությունը՝ կռապաշտության...*

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

*Հակ. 4.7-8 - **7** Արդ հնազանդեցէք Աստուծուն, հակառակ կացէք սատանային, եւ նա կ՚փախչի ձեզանից: **8** Մօտեցէք Աստուծուն, եւ նա կմօտենայ ձեզ: Սրբեցէք ձեր ձեռքերը, ով մեղաւորներ, եւ ձեր սրտերը մաքրեցէք, ով երկմիտներ:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ